

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

10. 05. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Վ.Դոխոյանը, Ն. Համբարձումյանը, - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ
Ա. Սարգսյանը , Տ. Էվինյանը - մարզպետի օգնականներ

Օր ա կ ա ր գ ու մ`

1. ՀՀ վարչապետի հանձնարարականի վերաբերյալ կատարված աշխատանքների մասին - զեկ. Վ.Խաչատրյան
2. Մարզի տարածքում նշանավոր գործիչների անուններով անվանակոչված փողոցների, կրթամշակութային օջախների, պուրակների և այլ կազմակերպությունների անունների վերաբերյալ տեղեկույթի տրամադրման վերաբերյալ -զեկ. Մ.Սայադյան, Դ.Մանուչարյան
3. Սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ -զեկ. Հ.Պապոյան
4. Գարնանային աշխատանքների վերաբերյալ -զեկ. Գ. Հակոբյան
5. Ոստիկանության տեղեկատվության վերաբերյալ 2016թ. առաջին եսամայակում հաշվառված անչափահասների և կատարած աշխատանքների մասին - զեկ. Ն.Համբարձումյան
6. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ. Ասլանյանին`

Առաջարկել Լոռու մարզի Սպիտակ և Ստեփանավան համայնքների ղեկավարներին` հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել տեղեկատվություն համայնքներում առկա դեռևս չսեփականաշնորհված բնակարանների և բնակիչների վերաբերյալ:

2. Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Սարգսյանին`

Քննարկել և ներկայացնել առաջարկություններ Անկախության 25-ամյակի միջոցառումների կազմակերպման և անցկացման մարզային հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ:

2. Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Խաչատրյանին`

5-օրյա ժամկետում ներկայացնել զրոյված զինծառայողների ընտանիքների մասին ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականի կատարման վերաբերյալ տեղեկատվություն:

4. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին`

Դեբետ համայնքի ղեկավարի հետ քննարկել կառուցվելիք «Սմարթ» կենտրոնի հարակից տարածքների խնդիրները և ներկայացնել առաջարկություններ դրանց իրավական կարգավորման վերաբերյալ:

5. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին`

ա/ Ուսումնասիրել և համապատասխան գրություն ներկայացնել ՀՀ ՏԿ և Զարգացման նախարարին՝ կառուցվելիք «Սմարթ» կենտրոնի գազաֆիկացման հնարավորությունների վերաբերյալ:

/Ժամկետ՝ 2օր/

բ/ Կատարված ուսումնասիրությունների հիման վրա դիմել ՀՀ ՏԿ և Զարգացման նախարարին՝ Թումանյան համայնքի դպրոցի մասնաշենքի, բազմաբնակարան շենքի տանիքի և մանկապարտեզի հիմնանորոգման վերաբերյալ:

/Ժամկետ՝ 2օր/

6. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Ուսումնասիրել Թումանյանի տարածաշրջանի համայնքներում կարկտահարության պատճառած վնասները և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ  Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322/4- 32- 99/